ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N – 020/131
«07» նոյեմբերի 2012 թ

Հ Հ Արագածոտն մարզ, ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252) 2-43-93, 093-98-00-05,
ֆաքս (0252) 2-44-45 , կայք՝ www. aparan.am, էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ Ս. Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Կից ուղարկվում է Ապարանի քաղաքային համայնքի ավագանու 30.10.2012թ. նիստի NN 24,25,26,27,28,29,30 որոշումները:

Քաղաքապետ՝ **Գ.Ս.Աբրահամյան**

Ելք
«Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին
«08» 11 2012թ.
Մուտք № 9/5308-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

ՈՐՈՇՈՒՄ

30 Հոկտեմբերի 2012 թվականի N 24 - Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.12.2011 Թ N 53 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 24.05.2012 թ թիվ 711-Ն որոշմամբ Ապարանի քաղաքային համայնքի մարզադպրոցի շենքի վերանորոգման նպատակով հատկացվել է 2,0 միլիոն դրամ սուբվենցիա, միաժամանակ՝ հաշվի առնելով համայնքի 2012 թ բյուջեի հարկային եկամուտների մասում առկա որոշ անճշտությունների ճշգրտման անհրաժեշտությունը՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ավելացնել Ապարանի քաղաքային համայնքի 2012 թ բյուջեի եկամուտները՝ պաշտոնեական դրամաշնորհների մասով՝ 2000,0 հազար դրամով՝ համաձայն N1 հավելվածի
2. ՊակասեցնելԱպարանի քաղաքային համայնքի 2012թ բյուջեի եկամուտները համաձայն N1 հավելվածի
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն N 2 հավելվածի:
5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 3 հավելվածի:
6. Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 4 հավելվածի:

Ավագանի՝ Կողմ (8) Դեմ (0) Չեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան
Արսեն Պողոսյան

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

ՈՐՈՇՈՒՄ

30 Հոկտեմբերի 2012 թվականի N 25 - Ն

«ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ և 32-րդ հոդվածի 6-րդ կետերի պահանջներով, նպատակ ունենալով համայնքի տարածքում կանոնակարգելու բնակչության կոմունալ սպասարկման և կոմունալ ծառայությունների կազմակերպումը, ապահովելու դրանց պատշաճ կազմակերպման իրավական երաշխիքներն ու պատասխանատվության հստակ մեխանիզմները, ելնելով համայնքում կոմունալ ծառայությունների կազմակերպման գործառույթների կանոնակարգման անհրաժեշտությունից՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարանի քաղաքային համայնքում ստեղծել «Ապարանի քաղաքային համայնքի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն / ՀՈԱԿ /:

2. Հաստատել «Ապարանի քաղաքային համայնքի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

3. Համաձայնվել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությանը՝
Սամվել Սեդրակյանին «Ապարանի քաղաքային համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ տնօրեն նշանակելու համար:

4. Կազմակերպության ձևավորման և կազմակերպական մյուս խնդիրների լուծման նպատակով կազմակերպության ղեկավարին ս/թ նոյեմբերի 1-ից համարել աշխատանքի մեջ:
Ամսական դրույքաչափը սահմանել՝ 48.000 դրամ:
Կազմակերպության գործունեությունը սկսել 2013 թ հունվարի 1-ից:

5. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքապետի տեղակալ Գ.Երեմյանի վրա:

Ավագանի՝ Կողմ (8) Դեմ (0) Չեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան
Արսեն Պողոսյան

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 Հոկտեմբերի 2012 թվականի N 26 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԸ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Ապարան քաղաքի բնակիչ Գևորգ Գևորգյանի դիմումը՝ իր ավտոմեքենայի գույքահարկի տույժը զիջելու մասին, ուստի համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Զիջել քաղ. Գևորգ Գևորգյանի ՎԱԶ -21074 մակնիշի ավտոմեքենայի 2012 թ. գույքահարկի տույժը՝ 5288 դրամի չափով:

Ավագանի՝ Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան
Արսեն Պողոսյան

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

ՈՐՈՇՈՒՄ

30 Հոկտեմբերի 2012 թվականի N 27 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՓԱՆՈՍՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Ապարան քաղաքի բնակիչ Հարություն Փանոսյանի դիմումը՝ իր ավտոմեքենայի 2012 թ գույքահարկը և տույժը զիջելու մասին, ուստի համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Զիջել քաղ. Հարություն Փանոսյանի Մոսկվիչ - 412 մակնիշի ավտոմեքենայի 2012 թ. գույքահարկը 7500 դրամի և տույժը՝ 3758 դրամի չափով, ընդամենը՝ 11258 դրամ:

Ավագանի՝ Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան
Արսեն Պողոսյան

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային համայնք
Ք. Ապարան, Բաղրամյան 26, հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

ՈՐՈՇՈՒՄ

30 Հոկտեմբերի 2012 թվականի N 28 - Ա

ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի 28. 07. 2011 թ N 29 արձանագրային որոշման պահանջների՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարան քաղաքում ինտեգրված սոցիալական ծառայություններ ստեղծելու նպատակով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը Ապարանի քաղաքապետարանի վարչական շենքի 1-ին հարկից անհատույց և անժամկետ օգտագործման հատկացնել 131,33 քմ տարածք:

2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հետ կնքել տարածքն անհատույց և անժամկետ օգտագործման պայմանագիր:

Ավագանի՝ Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան
Արսեն Պողոսյան

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

համայնք

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային

Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 Հոկտեմբերի 2012 թվականի N 29 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և 38-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապատասխան՝

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ դասական աճուրդ-վաճառքով օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 3914,5 քմ հողատարածքներ:

2. Հաստատել հողատարածքների օտարման մեկնարկային գները և հավելածի քայլերը՝

N	Հողատարածքի հասցեն	Ծածկա-գիր	Մակերես /քմ/	Մեկնարկ գինը՝ ՀՀ դրամ	1 լոտի նախավճար 5 %	Հավելածի քայլ-դրամ	Նպատակային նշանակությունը և հողատեսքը	Գործառնական նշանակությունը
1	Նժդեհի 13 / Բ	ՆՓ 13/2	24	120000	6000	7000	Բնակավայրի բն.	Ավտոտնակ
2	Նժդեհի 13/Գ	ՆՓ 13/3	24	120000	6000	7000	Բնակավայրի բն.	Ավտոտնակ
3	Նժդեհի 13 /Դ	ՆՓ 13/4	24	120000	6000	7000	Բնակավայրի բն.	Ավտոտնակ
4	Նժդեհի 13 /Ե	ՆՓ 13/5	22,5	112500	5625	7000	Բնակավայրի բն.	Ավտոտնակ
5	Գայի 2-րդ փ.30	ԳՓ - 30	3820	930000	46500	50000	Բնակավայրի այլ	Բնակելի օժանդակ

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդ - վաճառքի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ավագանի՝ Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան
Արսեն Պողոսյան

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

համայնք

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի քաղաքային

Ք. Ապարան, Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), 093-980005, էլ. փոստ (0252-2 44 45)

ՈՐՈՇՈՒՄ

30 Հոկտեմբերի 2012 թվականի N 30 - Ա

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76 - 77- րդ, 91 - րդ և 94 - րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել քաղաքապետին՝ մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3530 քմ հողամասեր՝ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու նպատակով:
2. Հաստատել հողամասերի վարձակալման տարեկան վարձավճարի մեկնարկային գները, հավելածի քայլերը, վարձակալման ժամկետները՝

Հ/Հ	Հողատեսքի կարգը	Ծածկագիրը	Մասնակցութ-յան վճար	Մակերես քմ	Մեկնարկային վճար-դրամ	Հավելածի քայլը-դրամ	Վարձակալության ժամկետ /տարի/
1	Համալիրի հետևում	217-002	Գյուղ/վար-5-րդ կարգ	2530	4000	500	25
2	Նժդեհի փ.դպրոցի մոտ	036-043	Գյուղ/վար-2-րդ կարգ	1000	3000	500	5

3. Համայնքի ղեկավարին՝ ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր այն պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ավագանի՝ Կողմ (8) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Արկադի Կարապետյան
Հովհաննես Շահբազյան
Հայկ Շմավոնյան
Արսեն Պողոսյան

Ապարանի քաղաքապետ՝ Գ. Աբրահամյան